



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014թ. առաջին կիսամյակում / վերլուծություն /

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 100222 գործարքներ, որոնց քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 2.7 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 14.3 %-ով :

2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 24746 օտարման գործարքների 75.7 %-ը կազմել են առուվաճառքները, 23.7 %-ը՝ նվիրատվությունները և 0.6 %-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.1 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.9 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 7.3 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 12.4%-ով: 2014թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7614 առուվաճառքի գործարքների 62.5 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014թ. առաջին կիսամյակում, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.2 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 23.3 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2014թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.
Կենտրոն	426000	428000	428000
Արաբկիր	353700	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	281250	282700	282500
Նոր-Նորք	248000	252300	251500
Ավան	257200	260100	259600
Էրեբունի	246900	250700	249300
Շենգավիթ	252550	256100	255200
Դավթաշեն	272150	275150	274800
Աջափնյակ	244800	249500	248400
Մալաթիա-Սեբաստիա	237500	242000	241500
Նուբարաշեն	149000	155200	152800
<b>Միջինը Երևանում</b>	<b>269900</b>	<b>273500</b>	<b>272700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014թ. առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 0.3 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 1.3%-ով:

2014թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2226 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 13.7 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 9.5 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2014թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	114500	115700	115000
	Ապարան	55500	57400	56900
	Թալին	63300	65500	64700
Արարատ	Արտաշատ	94650	95850	94900
	Մասիս	113900	115200	115000
	Վեդի	98900	100400	99900
	Արարատ	75100	75350	75200

Արմավիր	Վաղարշապատ	153800	154150	154100
	Արմավիր	120500	121200	121200
	Մեծամոր	87200	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99100	99200	99150
	Գավառ	58900	59800	59400
	Մարտունի	107600	107650	107600
	Վարդենիս	43400	44800	44600
	Ճամբարակ	27200	28700	28400
Լոռի	Վանաձոր	88100	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	54800	55000	55000
	Տաշիր	45850	47300	47200
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19900	20200	20200
Կոտայք	Աբովյան	154100	155100	155100
	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	107800	108150	108100
	Եղվարդ	109300	109400	109300
	Հրազդան	63400	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85200	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66300	66667	66500
	Մարալիկ	40100	40700	40400
Սյունիք	Գորիս	119550	121900	121700
	Կապան	91500	92400	92200
	Սիսիան	90225	91150	91100
	Մեղրի	78575	80900	80400
	Ագարակ	45400	46900	46500
	Քաջարան	94300	94650	94600
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	93700	95000	95000
	Եղեգնաձոր	121500	125208	124600
	Ջերմուկ	111400	112700	112300
Տավուշ	Դիլիջան	111200	113150	113100
	Իջևան	117600	118300	118300
	Բերդ	59000	60200	60100
	Նոյեմբերյան	48000	49900	49600
	Այրում	30400	31850	31700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 0.1%-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 0.9%-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2521 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 656, մարզերում միասին վերցրած՝ 1865: 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 9.3 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 14.6 %-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7.2 %-ով: 2014թ. առաջին կիսամյակում, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը

աճել է 10.9 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 10.4 %-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 11.0 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2014թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.
Կենտրոն	474400	476100	476100
Արաբկիր	381300	383000	383000
Քանաքեռ Զեյթուն	293600	295000	295000
Նորք Մարաշ	317600	319200	319200
Ավան	269400	270500	270500
Էրեբունի	238200	239600	239500
Շենգավիթ	253700	255000	255000
Դավթաշեն	274700	276000	276000
Աջափնյակ	248400	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	236800	238000	238000
Նուբարաշեն	149400	150600	150500
<b>Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)</b>	<b>285200</b>	<b>286600</b>	<b>286600</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, մնացել են անփոփոխ, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 0.5%-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2013թ.	առաջին կիսամյակ 2014թ.	երկրորդ կիսամյակ 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	135900	136200	136200
	Ապարան	59550	60050	60000
	Թալին	68900	69250	69250
Արարատ	Արտաշատ	99550	100000	100000
	Մասիս	114750	115100	115100
	Վեդի	101850	102300	102300
	Արարատ	87950	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152800	153100	153100
	Արմավիր	106800	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94600	94800	94800
	Գավառ	57000	57100	57100
	Մարտունի	95600	96100	96100

	Վարդենիս	40300	41000	41000
	Ճամբարակ	30500	31100	31100
Լոռի	Վանաձոր	99700	100000	100000
	Ստեփանավան	89600	90000	90000
	Սպիտակ	113900	114000	114000
	Ալավերդի	49100	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	13700	14000	14000
	Ախթալա	29900	30000	30000
		Աբովյան	155800	157000
Կոտայք	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120300	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82500	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82800	83000	83000
		Գյումրի	118300	118500
Շիրակի	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	51900	52000	52000
		Գորիս	129700	130000
Սյունիք	Կապան	99500	100000	100000
	Սիսիան	95250	96500	96500
	Մեղրի	82800	84500	84500
	Ազարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11600	11600	11600
		Վայք	89500	90050
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	130500	131300	131300
		Դիլիջան	112000	113000
Տավուշ	Իջևան	122550	123200	123200
	Բերդ	59500	60100	60100
	Նոյեմբերյան	47400	48300	48300
	Այրում	35450	36250	36200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ մնացել են անփոփոխ, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 0.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 8028 միավոր /4630.67 հա/ հողեր, որից Երևանում՝ 793 միավոր /129.77 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4294 միավոր /3225.67 հա/, որից Երևանում՝ 40 միավոր /12.95 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2386 միավոր /197.39 հա/, որից Երևանում՝ 374 միավոր /15.01 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 895 միավոր /132.55 հա/, որից Երևանում՝ 341 միավոր /97.65 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 110 միավոր /57.93 հա/, որից Երևանում՝ 38 միավոր /4.16 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 26 միավոր /51.92 հա/,

• հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 316 միավոր /960.04 հա/

• ջրային հողեր՝ 1 միավոր /5.17 հա/ ընդհանուր մակերեսով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 6745 միավորի /4144.40 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 673 միավոր /121.70 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1249 միավոր /472.68 հա/, որից Երևանում՝ 109 միավոր /7.53 հա/ և փոխանակության գործարքներ՝ 34 միավոր /13.59 հա/, որից Երևանում՝ 11 միավոր /0.54 հա/:

Հանրապետությունում 2014թ. առաջին կիսամյակում, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 3.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 23.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 1090.90 հա, որից 126.94 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.2%-ը կամ 1634 գործարքներ /453.99 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 296 միավոր /9.32 հա/, իսկ 74.7%-ը կամ 5041 միավորը /2732.11 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 372 միավոր /111.84 հա/:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 70 գործարք /958.30 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2014թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	20	1.31	118	2.32	158	5.69	30	10.66	15	2.53	187	9.65	140	89.01
Արագածոտն	58	44.77	4	0.38	5	0.34	25	0.71	314	230.71	0	0.00	113	13.19	13	0.79
Արարատ	49	100.37	7	18.79	131	6.84	33	1.26	500	251.38	7	9.12	253	22.75	28	0.42
Արմավիր	17	12.83	4	3.34	5	0.30	11	0.26	494	623.30	2	0.11	253	24.94	14	0.16
Գեղարքունիք	15	22.73	5	2.98	46	2.62	62	2.60	89	88.53	0	0.00	107	13.67	9	1.02
Լոռի	13	4.43	5	4.60	37	0.78	52	4.30	830	559.57	4	1.80	61	5.87	13	0.29
Կոտայք	81	104.51	3	0.39	102	6.14	70	1.30	467	257.74	4	1.92	293	23.30	52	4.01
Շիրակ	5	5.56	2	0.55	32	0.42	8	0.64	197	243.87	1	1.59	75	8.66	16	0.59
Սյունիք	15	20.46	10	4.02	6	0.40	9	1.87	113	106.48	0	0.00	19	1.50	11	0.23
Վայոց Ձոր	20	34.55	2	1.41	8	0.45	8	0.56	54	22.85	0	0.00	25	2.78	9	1.40
Տավուշ	8	8.29	1	0.09	33	1.65	32	3.45	124	36.16	8	2.51	47	7.15	23	6.74
Ընդամենը	281	358.50	63	37.86	523	22.26	468	22.64	3212	2431.25	41	19.58	1433	133.46	328	104.66

Ստորև ներկայացվում է 2014թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային

նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբեր օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	224	6.02	19	0.52	108	1.86	97	3.64	72	3.31	0	0.00	1	0.80	10	0.46	61	2.05
Արագածոտն	1	0.0003	0	0.00	0	0.00	1	0.0003	81	30.62	48	29.19	4	0.38	5	0.34	24	0.71
Արարատ	7	0.04	0	0.00	0	0.00	7	0.04	211	126.37	47	99.52	7	18.79	131	6.84	26	1.22
Արմավիր	5	0.023	0	0.00	1	0.003	4	0.02	31	15.98	16	12.11	4	3.34	4	0.29	7	0.24
Գեղարքունիք	3	0.03	0	0.00	1	0.02	2	0.01	124	29.55	14	21.38	5	2.98	45	2.60	60	2.59
Լոռի	19	0.32	0	0.00	8	0.13	11	0.19	87	13.52	12	4.15	5	4.60	29	0.66	41	4.11
Կոտայք	11	0.82	0	0.00	10	0.75	1	0.07	237	106.67	73	99.66	3	0.39	92	5.39	69	1.23
Շիրակ	14	0.10	0	0.00	14	0.10	0	0.00	33	7.07	5	5.56	2	0.55	18	0.32	8	0.64
Սյունիք	6	0.3304	1	0.12	4	0.21	1	0.0004	34	26.43	15	20.46	9	3.91	2	0.19	8	1.87
Վայոց Ձոր	3	0.033	0	0.00	2	0.03	1	0.003	35	36.93	20	34.55	2	1.41	6	0.41	7	0.56
Տավուշ	9	0.67	1	0.09	5	0.25	3	0.33	65	12.82	8	8.29	0	0.00	28	1.40	29	3.13
Ընդամենը	302	8.39	21	0.73	153	3.35	128	4.30	1010	409.27	258	334.87	42	37.15	370	18.90	340	18.35

Հանրապետությունում 2014թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 23 գործարքներ /23.63 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2014թ. առաջին կիսամյակում, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 11.6%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 15.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 14.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 6.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 31.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 0.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 23.5%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	40	20.38	36.8	2517.5	298.8	231	105.07	365.0	12000.0	3535.3
Ապարան	1	0.11	2065.9	2065.9	2065.9	14	10.32	86.5	2727.3	705.0
Թալին	7	8.70	38.2	261.5	142.3	35	53.59	93.6	5494.5	711.9
Ծաղկահովիտ						24	51.92	79.5	1000.0	301.6

Արարատի մարզ										
Արտաշատ	23	74.95	140.0	9841.6	4099.5	218	82.25	335.1	10833.3	2614.5
Մասիս	15	15.00	78.9	4154.9	1044.0	79	48.52	200.0	11904.8	2926.9
Վեդի	9	9.57	69.0	515.0	263.4	198	119.13	207.0	10795.1	1811.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	13	9.04	60.6	4207.0	1008.1	253	142.46	294.3	9090.0	1226.6
Բաղրամյան						73	291.57	90.6	2561.1	802.6
Վաղարշապատ	3	3.07	191.6	1674.9	933.3	145	98.17	444.4	11764.7	2102.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.67	660.7	660.7	660.7	6	1.50	199.8	1875.0	431.1
Ճամբարակ						4	1.29	60.5	953.3	355.2
Մարտունի	3	0.15	128.3	1455.7	723.7	31	9.24	51.1	2850.0	757.5
Սևան	1	0.50	132.0	132.0	132.0	4	1.50	52.2	2134.8	328.5
Վարդենիս	9	20.06	60.5	418.0	297.9	43	73.70	41.2	2575.1	403.1
Լոռու մարզ										
Ալավերդի	5	1.08	456.5	2480.0	1389.6	43	17.25	170.4	6424.2	579.1
Գուգարք	3	1.17	815.9	1017.4	948.3	86	46.64	234.6	6065.9	805.0
Սպիտակ	3	1.79	383.2	2553.0	1113.8	22	6.35	250.0	5555.5	721.8
Ստեփանավան	1	0.11	706.2	706.2	706.2	38	31.28	90.6	1686.6	346.0
Տաշիր						639	455.43	45.3	1384.4	176.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	28	34.93	77.5	6660.3	992.4	236	96.96	279.3	11942.7	4002.1
Եղվարդ	38	56.47	72.3	6921.6	2036.6	168	131.13	174.4	11971.8	2398.3
Հրազդան	7	8.27	91.5	1164.0	603.2	48	25.83	130.5	10256.4	1387.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.00	293.8	295.0	294.4	73	73.36	252.0	1693.1	645.0
Ամասիա	2	3.56	132.0	187.0	159.5	16	51.26	40.9	261.0	127.8
Անի	1	1.00	105.0	105.0	105.0	67	88.19	110.6	546.9	416.1
Աշոցք						13	9.32	58.5	215.8	133.2
Արթիկ						28	21.74	79.4	1428.6	448.8
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.66	263.6	263.6	263.6	10	7.78	92.6	1023.2	741.8
Կապան	10	5.31	76.9	1298.8	548.1	8	5.90	120.0	841.6	376.7
Մեղրի	3	12.53	53.0	77.0	65.0	12	4.99	193.0	3000.0	745.0
Սիսիան	1	1.96	136.6	136.6	136.6	83	87.81	46.3	1977.4	551.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	9	13.64	54.7	1500.0	379.0	30	17.95	125.0	10000.0	1941.7
Վայք	11	20.92	41.3	8506.3	4280.8	21	4.07	58.8	1430.7	652.6
Տավուշի մարզ										
Բերդ						41	9.28	213.3	3783.8	693.3
Իջևան	5	6.47	165.0	1711.8	929.7	38	12.53	267.5	9454.5	1272.6
Նոյեմբերյան	3	1.82	162.9	1518.7	614.9	45	14.35	46.7	7368.4	931.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.



Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	4	778.6	2320.7	6150.0	4233.3	95	95554.7	130.7	22200.0	2582.7
Ապարան						9	13191.0	124.1	609.6	390.0
Թալին	1	2656.0	51.6	51.6	51.6	4	6410.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						3	14077.0	60.0	214.3	92.7
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	12	14428.0	166.9	948.8	515.0	65	70388.9	173.9	7140.3	901.8
Մասիս	108	44811.9	149.5	6001.2	3050.1	127	88980.1	187.5	25000.0	1217.1
Վեդի	11	9151.7	97.2	2000.0	828.8	58	64990.4	126.1	5000.0	662.9
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						101	107106.5	131.6	9090.9	1214.7
Բաղրամյան						11	11525.6	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	4	2924.7	157.4	630.0	427.9	138	127490.0	197.4	26528.4	1531.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	2	990.2	110.0	190.2	150.1	23	24663.7	186.6	1084.3	684.0
Ճամբարակ	1	34.1	293.3	293.3	293.3	4	801.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	19	15047.2	112.6	666.7	235.8	64	81617.2	119.3	5000.0	286.2
Սևան	4	1396.7	372.6	776.3	440.0	8	10585.4	240.0	3110.4	324.2
Վարդենիս	19	8491.4	66.0	770.0	418.0	7	15854.8	72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	9	2174.1	244.3	1725.0	1540.6	11	13111.2	114.3	1388.9	217.1
Գուգարք	11	852.3	2202.8	5203.3	2820.1	27	15726.5	77.9	14083.3	1261.9
Սպիտակ	6	3393.7	157.3	929.5	538.2	12	17997.5	104.9	1348.3	206.7
Ստեփանավան						8	8233.5	88.2	1666.7	175.5
Տաշիր	3	135.4	351.5	360.7	355.0	2	2369.7	45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	64	32659.6	310.0	6078.1	2786.4	138	107198.4	264.5	35353.5	2012.1
Եղվարդ	27	20523.6	534.6	4437.5	2495.7	137	108663.1	173.6	27000.0	2871.5
Հրազդան	1	690.0	1428.3	1428.3	1428.3	13	12753.0	117.7	34848.5	1320.4
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	12	2814.6	574.3	7692.3	4130.9	36	36214.5	113.6	18750.0	334.8
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	72.0	582.2	594.7	588.4	4	9460.0	67.9	180.6	182.3
Աշոցք						1	2400.0	40.8	144.0	64.8
Արթիկ	4	278.0	160.0	4333.3	1628.6	34	38558.8	111.8	5000.0	218.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	1	778.0	425.3	425.3	425.3	4	4304.0	112.2	1700.0	367.1
Կապան	1	1103.5	103.7	103.7	103.7	7	2753.9	67.9	2638.9	313.5
Մեղրի						3	2514.0	68.5	632.9	222.5
Սիսիան						5	5386.0	123.5	875.0	221.8
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						22	25989.2	96.7	7659.6	508.8
Վայք	6	4139.1	850.5	860.0	854.0	3	1805.5	120.7	1448.3	236.8
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						1	1869.0	75.8	810.0	121.5
Իջևան	21	12262.8	160.0	3000.0	1916.9	41	64733.8	74.1	14423.1	527.8
Նոյեմբերյան	7	1705.5	159.4	5510.2	2330.7	5	4883.6	125.0	1948.1	231.0

2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4101 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.1 %-ը:

2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 4.9 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 3.0 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 258 բնակարանների, 446 անհատական բնակելի տների, 1787 հասարակական և 428 արտադրական նշանակության օբյեկտների, 1108 միավոր /4705.99 հա/ հողերի, 2 այգետնակների և 72 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 40 վարձակալության գործարքների քանակը 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 37.5 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 60.0 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 4705.99 հա հողերից 11.59 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4694.40 հա հողերի 2717.73 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1485.23 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 0.20 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 2487.03 հա, որից 723.60 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2014թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12144 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.1 %: 2014թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 10.7 %-ով, իսկ 2013թ. առաջին համեմատ աճել՝ 16.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.9 %/, առանձնատների /24.8 %/, հասարակական նշանակության օբյեկտների /10.3 %/ և հողերի /6.7 %/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6693 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 12.5 %-ով, իսկ 2013թ. առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 20.6 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1001 գործարքներ, որից 667՝ Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 7.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 11.7 %-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 0.6 %-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2013թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 23.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 21.3 %-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 29.5 %-ով:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 869.56 հա մակերեսով հողեր, որից 55.40 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 89.3% կամ 776.53 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.53 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 363.67 հա, որից 361.97 հա գյուղատնտեսական նշանակության:

2014թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 10592 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2013թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 4.3 %-ով, իսկ 2012թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել՝ 0.4 %-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /22.6%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե